

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և աօն օրերէն):

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Յայտարարութիւնները ընդունվում են ա մեն լ Ե զ ու ո Վ

Օտարաբաղաճացիք գիմում են ուղղակի
Генералъ. Редакція „Мелі“

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ն է ր զ ի ն տ ե ու թ ի լ ն: Պատասխան պ. Ամերիկեանին: Նամակ Սիմֆերոպոլից: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: Խորհրդալի: Գերմանիա: Նամակ Գերմանիայից:—Մշակի: հեռախօսներ:—Յայտարարութիւններ:—Տեղեկացոյց:—Բանասիրական: Աղաջան և Գիւլիզար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆ Պ. ԱՄԵՐԻԿԵԱՆԻՆ

Հայոց թատրոնի տաղանդաւոր հիւանդ դերասան պ. Ամերիկեանը պատասխանել է իմ հայոց թատրոն վերնագրով յօդուածին, որ տպւած էր «Մշակի» № 197—ի մէջ: Պարտնիր իր պատասխանը տպել է ուսումն. լրագրի մէջ, որի խմբագիրը գործի հետ բուրովին անձանթ, իր կողմից մի քանի անտեղեկ, փոքրային նկատողութիւններ է աւելում:

Ի՞նչի համար պ. Ամերիկեանը իր պատասխանը տպել է ուսումն. լրագրի մէջ:

«Օճօրթ» լրագրի խմբագիրն էլ այս հարցը դնելով խոտովանում է, որ պ. Ամերիկեանին նամակի նիւթը հայ ընթերցողների համար է հետաքրքիր, բայց մի և նոյն ժամանակ համաձայնում է պ. Ամերիկեանի հետ, որ ուսուցիչն տպելով պարտին նամակը նա ինձ կը պատժէ, որովհետեւ ես ուշադրութիւն չեմ դարձնում հայ հասարակութեան կարծիքի վրա և վախճում են օտարների դատաստանից:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՂԱՋԱՆ ԵՒ ԳԻՒԼԻԶԱՐ

(Շարունակութիւն և վերջ)

Քաջերի խումբերը իրանց պաշտպանելով մօտենում էին ամրոցին, որտեղից հասաւ օգնութիւն, որոնց օգնութեամբ բոլոր զօրքը մտաւ ամրոցը և դռները փակվեցան մինչև յունիսի 28-ը: Քուրդները ներս թափեցին քաղաքը և սկսեցին զարհուրելի կերպով կոտորել քրիստոնէայ բնակիչներին:

Լաց ու կոծը, տները այրվելը և հրացանների անկարգ գցելու ձայները կազմում էին մի դժոխային ձայն: Արևմտաթաթախ և վիրաւորեալ կանայք վազվզում էին փողոցից փողոց փրկութիւն գտնելու և մէկ մէկու ետեւից թափվում էին քուրդների մղախի և խանչալի հարուածներէն: Կիսաշարք երեխայք կրակն էին թափում, փութը դերը կատաղութեամբ վազվզում էին քաղաքի մէջ նոր զոհ գտնելու: Կաթնակեր երեխայք աւանդում էին տանջանքով հողին և պատանում էր որ երեխան ընկնում էր գետին և մղախը կրկին անգամ բարձրացնում էր շաղախված տաք տաք արիւնով: Ամրոցի զօրակը յուսալքաբար զարհուրում էր, որ չէր կարողանում օգնութիւն հասցնել խեղճ տառապեալներին: Այրված կերպարանքով զինուորների երեսի վրա կաթում էին խղճութեան և կատաղութեան արտասուքները:

Ամենազարհուրելի նեղածութիւնն էր Գալուստեանցի տան առաջը. ամուր կողպէքները և պինդ պարիսպները չէին թողնում քուրդներին ներս թափելու, որտեղից Գալուստեանցը, Աղաջանը և նոցա հինգ ծառաները սաստիկ հա-

Ինձ թոյլ կը տամ նկատել «Օճօրթ» լրագրի գիտական խմբագիրն, որ նա համաձայնելով պ. Ամերիկեանի հետ սխալվում է և խաբւում է. սխալվում է, որովհետեւ ինձ համար ոչինչ նշանակութիւն չունի իմ գործունէութեան հետ անձանթ օտար հասարակութեան կարծիքը և խաբւում է, որովհետեւ պ. Ամերիկեանը այդ նպատակով չէ տպել իր պատասխանը ուսումն. լրագրի մէջ: Պարտնիր շատ լաւ ծանաչում է հայ հասարակութիւնը, որ նրան այլ ևս մարտիրոս, թատրոնի համար կեանքը մաշող անձնաւորութիւն չէ համարում, այլ երկար տարիներ նրա հետ գործ ունենալուց յետոյ հասկացել է, որ այդ մարդը իր գրպանին է ծառայում, թատրոնը իր համար ապրուստի միջոց է դարձրել, որ աշխատում է ամեն տեսակ ներքին և անհրեղի միջոցներով հասարակութիւնից փող դուրս գծելը:

Ինձ կասեն ի՞նչ ամօթ բան է, որ պ. Ամերիկեանը դերասան լինելով թատրոնը իր ապրուստի միջոց է դարձրել: Մի՞թէ օտար ազգերի դերասանները նոյնը չեն անում, մի՞թէ իւրաքանչիւր արհեստաւոր իր արհեստով չէ ապրում: Այս հանգամանքի մեկնութեան հետ ծանօթանալ ցանկացողները (օտարներից ի հարկէ, որոնց թիւում և «Օճօրթ» լրագրի պ. խմբագիրը) թող ներութիւն յանձն առնեն կարգաւ իմ մի շարք «Մշակի» մէջ տպւած թատրոնական ընդունութիւնները. այժմ այսքանը կասեմ, որ պ. Ամերիկեանը չը նայելով իր տաղանդին, երկար տարիների ընթացքում ափիշայով շատ է խոտացել հասարակութեանը և գրեթէ

բոլորեւթով քուրդներին, պաշտպանում էին իրանց: Աղաջանի հրացանը ուղիղ խփում էր, Նա հասկանում էր որ կորած են, բայց նա այդպէս հեշտութեամբ ձեռք չի ընկնի և նրա հրացանով սպանվեցան շատ ցեղապետներ, բայց նրանց մէջ չը կար իր հակառակորդ Մըստօն....

Յանկարծ լավից Գիւլիզարի յուսահատուած ձայնը և նա իր փոքր եղբայրներով ներս վազեց քաջ պատերազմողների սենաները. նրա ետեւից վազում էր Մըստօն իր կատաղած ամբողջ իմանալով տան բոլոր ճանապարհները, Մըստօն չը հրամայեց Գալուստեանցի տունը այրել, այլ մի կերպով մտաւ ձիւնոցը, պատը քանդեց և դուրս եկաւ սենանից:

Հազիւ կարողացաւ Գիւլիզարը փախչել նրա ձեռից իր եղբայրներով և մտնել քաջ պաշտպանների սենաները, Մըստօն ընկաւ նրանց ետեւից իրան ընկերներով և օրովհետեւ հրացաններ արձակել չէր կարելի, մի քանի ատրճառակներ ձայնիւր լսվեցին, ընկան մի քանի քուրդներ և Գալուստեանցի երեք ծառաները: Յետոյ սկսեցին խանչալներ գործ դնել, սպանվեց ինքը Գալուստեանցը, ծառաները վիրաւորված էին և անուծ ընկած գետին: Միայն Աղաջանն էր արձակում հրացանը աջ և ձախ, պաշտպանելով այն անկիւնը որտեղ մտել էր: Գիւլիզարը երեխաներով: Նա այլ ևս մարդու կերպարանք չունէր և նա դարձել էր պատերազմի դե: Նրա աչքերը վառվում էին, չորերը պատառոտած, լայն կուրծքը բաց և արիւնով սրկած, աջ ձեռով բռնած խանչալը խփում էր նա այս և այն կողմ, իսկ ձախովը պաշտպանում էր իր սիրոյ առարկային և կարծես թէ ասում էր. ոչ կարելի է խել Աղաջանին և ոչ նրանից Գիւլիզարին:

Մըստօն երբ տեսաւ որ իր քուրդները սաստիկ կոտորվում են, դադարեցան աղաղակով ընկաւ Աղաջանի գրկով.... Սկսում է սարսափել մենամարտութիւնը, երկուսն էլ զօրեղ են և քաջ: Աղաջանը սաստիկ դարձած լինելով, Մըստօն յանկարծ նրա վրա ընկնելուց, խանչալը ձեռից

ոչինչ չէ տուել, առեւ է նրանից փող (փող առնելու համար պ. Ամերիկեանը մեծ տաղանդ ունի), և զգվացրել է հասարակութիւնը թատրոնից:

Այժմ պ. Ամերիկեանը իր հիւանդութեանով ապրում է, հիւանդութենով ամեն բան արդարացնում է և միամտաբար բացականչում է ամբիթէ ես մեղաւոր եմ, որ հիւանդ եմ:

Պ. Ամերիկեանի պատասխանը ամբողջապէս ուղղած է իմ անձնականութեան դէմ, երկու տեղ նա ընդհանուր նկատողութիւններ է անում. պ. Ամերիկեանը յիշում է նոյեմբերի 12-ի իր յանդուգն վարմունքը և աշխատում է նրան մեկնել: Դրա մասին ես արդէն յայտնել եմ իմ կարծիքը. մի և նոյն բանը երկու անգամ պ. Ամերիկեանի համար չեմ ասի: Մի ուրիշ տեղ պարտնիր (որոնք շատ մեծ չեն) գործ է դրել հայոց բեմի ծառայութեան համար, ասում է, որ «Մշակ» աշուշտգիր է թողնում առանձին անձնաւորութիւնների կազմած ներկայացումները, մինչդեռ նրանց վրա պէտք է ուշադրութիւն դարձնել, քանի որ իր առաջնորդը յօդուածներով արժանանում է հայոց բեմի վերականգնելու միջոցները: Պ. Ամերիկեանը սաստիկ սխալվում է: «Մշակ» ուշադրութիւն է դարձրել այդ ներկայացումների և նրանց մասնակցող անհատների վրա և համոզվել է (այդ համոզմունքը «Մշակ» շատ անգամ յայտնել է իր էջերի մէջ), որ այդ անհատներից, մի քանի բացառութիւններով, ոչինչ չէ կարելի չնկել, որ նրանք ոչ թէ միայն չեն

վեր ընկաւ, բայց ձեռները և առամները օգնում էին նրան: Արդէն Մըստօն խռովուեց և ընկել և նրա ոյժը թուլանում էր. նրա ձախ ձեռքը որոնում էր գէնք մէջքից հանեց փոքրիկ դանակը և ուղղակի կռիւց Աղաջանի սիրտը որի ձեռները խսկոյն թուլացած վեր ընկան:

Արդէն պատրաստվում էր Մըստօն յաղթական ձայն տալ, բայց յանկարծ նա գոռաց և լռեց. խանչալը թափանցեց նրա մէջքը և մեկը նրան իր տակ պահպած Աղաջանի մարմին վրա: Այս խփողը Գիւլիզարի զօրեղ ձեռքն էր, որ տեղն ու տեղը վայր ընկաւ այն տեղ կտրած զլխով: Նրա եղբայրներին բռնեցին և կենդանի խորովեցին: Ոչնչացրին Գալուստեանցի ընտանիքը, կողոպտեցին բոլոր ունեցածը, ինչպէս և Բայազէթի ուրիշ քրիստոնէաներին, որոնք իր ժամանակին չը հեռացան այն կորած քաղաքից:

Միտի և ուրախութեան զիշերը կատարվեցաւ արիւնաթաթախ Աղաջանի և Գիւլիզարի համար որոնց կեանքը շատ թանկ նստեց քուրդներին: Մըստօն կանայքը նրա այդ կատարեցին Գալուստեանցի տանը, կտրեցին և ալակերպելով խեղճ օրիորդի դիակը: Մի և նոյն ժամանակ շատ քրիստոնէից երեխայք մորթվեցան այդ կանանց իրանիների տակը, որոնք ոչնչով պակաս չէին իրանց գաղանաբար մարդկերանից:

Քրիստոնէաների մորթելուց յետոյ սկզբեցաւ ամրոցի պաշարելը, որը շարունակվեցաւ մինչև յունիսի 28 և յաղթվածները ճաշակեցին ձիւ մսի համը և տեսան որ կարելի է գաղանացած թշնամեաց դէմ ընդդիմանալ, միայն զօրակի դժուարութիւնն էր ջուր ձարելը: Մէկ ամսան պըրտոր, դիակներով թունաւորված և արիւնաշաղկապ ջուրը բայազէթից հերոսները արիւն թափելով էին ճարում: Նրանք քաջալերված դընում էին այդ խմիչքի համար և շատերը միտ էին այնտեղ սպանուած թիւրքերից. իսկ մնացածները իրանց ընկերների համար բերում էին ջուր և նրանք նորից ուժեղորում, հաւատացած էին, որ կը հասնի օգնութիւն:

կարող վերականգնել հայոց թատրոնական բեմը, այլ իւրաքանչիւր ներկայացումով նրա գոյութեանը հարուած են հասցնում: Այդ հարուածներից մէկն էլ նոյեմբերի 12-ի ներկայացումն էր:

Ինչ կը վերաբերի պ. Ամերիկեանի հայ թատրոնի համար գործ դրած բոլոր ոյժերին, ցանկալի կը լինէր իմանալ ի՞նչ տեղ կը գործ դնէր պարտնիր իր ոյժերը, եթէ թատրոնը չը լինէր, ի՞նչով կը պարտէր նա: Չէ որ պարտնիր անընդունակ է յայտնել իրան որ և է աշխատանքի համար: Չէ որ պարտնիր շատ անգամ միջոց է ունեցել աշխատանքով ապրելու և նա միշտ փախել է աշխատանքից, աշխատանքին իրան անընդունակ է ցոյց տուել:

Պ. Ամերիկեանը ինձ անկիրթ է անուանում, որովհետեւ գիմնագիտյի չորրորդ դաստանից եմ դուրս եկել (գոնեա ճշմարիտ ասէր): Ես պարտնիր չեմ ասի, որ նա էլ անկիրթ է, որովհետեւ ներսիսեան դպրոցի երրորդ դաստանից արտաքսված է, այլ կը հարցնեմ ի՞նչ է պատճառը, որ պ. Ամերիկեանը ներսիսեան դպրոցի երրորդ դաստանից դուրս գալով կարող էր ինքնակրթութեամբ զարգանալ, իսկ ես չէի կարող Չէ որ «Օճօրթ» լրագրին էլ որի պաշտպանութիւնը խնդրել է պ. Ամերիկեանը, քարոզում է, որ բոլոր մարդկերանց ուղիղները մի առեւտակ են կ ա գ մ լ ա ծ:

Ցանկալի կը լինէր իմանալ ի՞նչ գրական կանխ կրթութիւն է ստացել պ. Ամերիկեանը, որից ես զուրկ եմ, ի՞նչպէս է ծանօթացել թատրոնական գործի հետ, որ ես

Անցնում էին ծանր և զարհուրելի օրերը, օդը սկսվեց թունաւորվել ամրոցի չորս կողմից չը ժողոված դիակներից, աւելի դժուարացաւ զօրակի դուրսբերը: Այդ հերոսները քաջութեամբ տանջվում էին և մեռում, որոնց հետ նմանապէս քաջութեամբ կրում էր բոլոր նեղութիւնները, ողորմաւոր ջուր կա վալեւ վսկին, միմիայն մի կին, որ մնացել էր կենդանի, այն էլ, որովհետեւ զօրակի հետ մնացել էր ամրոցում: Համբուրութեամբ նայում էր նա վիրաւորեալներին, մասնակցի լինելով բոլորից: Սա վիցկու և Յիւտաւ վսկու և բոլոր աշխատութիւններին. նա ուրիշների հետ միասին կրում էր 23 օրվայ պաշարված չքաւորութիւնները, ցաւած սրտով իր մարդ, գնդապետ կապիւսկուկ կորցնելուց յետոյ, որ սպանվեցաւ 6 յունիսի:

Վերջապէս յունիսի 28-ին ամրոցից նկատեցին Գրամ-Գալի և Գալեարի քաջերի զուգեղերը, որոնց քաջութիւնով Բայազէթը և նրա փոքրիկ զօրակը ազատվեցան. քուրդերի ամբողջ ցրվեցաւ աղաղակների ձեռից: Թիւրքաց կանոնաւոր զօրքը ջարդված փախաւական դարձաւ, թողնելով շատ գերիներ և մի քանի թշնդանօթներ և ամրոցի զօրակը ուրախութեամբ միացաւ զօրքի հետ:

Ամրոցից դուրս գալուց յետոյ, շատ զինուորականներ հետաքրքրվեցան տեսնել քաղաքացիների տները, որոնց տներում միշտ վայելում էին ուրախութիւն, բայց ոչ ոք չէր համարձակվում ներս մտնել տուն, որովհետեւ դիակների շատ վատ հոտը փչում էր տներից, որոնց չորս կողմը թափված էին շատ ալակերպված կանանց, մարդկանց և երեխանց դիակներ: Գալուստեանցի տան դռանը մի սևացած և ալակերպված դիակ էր ոտերից կախ տված, գլուխը կտրած, որից զարհուրանքով երեսները չուր էին տալիս: Նա էր գեղեցիկ Գիւլիզարի դիակը:

Թարգմ. Վարդուհի Սուքիասեան

որ է այն պատճառով է որ վայելչություն է
ունում, կամ որ և է կրթողական ազդեցութեան

է ենթարկուած, այլ միայն այն պատճառով, որ պ. Ամերիկեանը հիւանդ է և նրան կամենում են ներթափանց օգնել: Դա, կարծում ենք, ծաղր չէ նրա հիւանդութեան կամ ֆիզիկական պակասութիւնները վրա, այլ ճշմարտութիւն է նրա վարմունքի մասին: Այս, թատրոնական գործով էլ կարելի է հարստահարել հասարակութիւնը, մանաւանդ պատճառելով հիւանդ գրութիւնը և մի և նոյն ժամանակ կոտորել նոյն իսկ թատրոնի գործի անունը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԻՒՄ

«Голосъ» լրագրի Կ. Պօլսի թղթակիցը գրում է հետևեալը:

Ռուսաց դեսպան իշխան Լօբանով-Բոստովսկի առանց ժամանակ կորցնելու պատասխանեց Բ. Դրան պաշտօնագրին: Իր երկար գրութեամբ իշխանը կէտ առ կէտ հերքում է այն բոլոր մեղադրանքները, որ Բ. Դոուը բարձել է ռուս կառավարութեան վրա: Իշխանը պնդում է, որ Ռուսաստանը բոլորովին ճշգրտութեամբ կատարում էր Բերլինի դաշնագիրը, բայց թիւրքաց կառավարութիւնը նրան բողբոլին չէր օգնում: Յիշատար հրամանատար գեներալ Տօրէբէն նշանակել էր ռուսաց զորքերի Կ. Պօլսի շրջակայանից հեռանալու օրերը և ժամերը և դրա մասին յայտնել էր Բ. Դրան: Թիւրքաց կառավարութիւնը չը կարգադրեց, որ իր կանոնաւոր զորքերը շուտով գրաւէին ռուսներին դատարկած երկիրները: Այդ դաշնագրութեան շնորհիւ կատարվեցաւ քրիստոնեաների ջարդը, որի պատճառով ռուս զորքերը ստիպված էին Ազրիանօ-պօլից վերադառնալ դէպի Սան-Ստեֆանօ և նորից գրաւել թողած երկիրները: Իշխան Բոստովսկու պատասխանը լինել է այսպիսի փաստերով: Այսպիսով դուրս է գալիս, որ Բ. Դրան գանգատները ոչինչ նշանակութիւն չունեն, իսկ ինչ կը վերաբերի Մակեդոնիայի և Բուլղարիայի ապստամբութիւններին, նրանց պատճառը ոչ թէ ռուսաց ազդեցութիւնն էր, այլ այն դարևոր թշնամութիւնը, որ կայ այդ երկիրների բնակիչների և թիւրքերի մէջ:

Վնչքան էլ իշխան Լօբանով-Բոստովսկի պնդէ, որ Ռուսաստանը վճռել է ճշգրտութեամբ կատարել Բերլինի դաշնագիրը, այնու ամենայն Բ. Դոուը յուսարով միացած Եւրօպայի օգնութեան վրա, անդադար բողբոլում է դաշնագրի սկզբնական դէպքերում և ռուս կառավարութիւնը, աղաւաղում է փաստերը, անդադար գանգատում է և կամենում է մի նոր հրդեհ գցել օրից ինքն աւելի կը վնասվի:

Վուցէթիւրքաց կառավարութեանը հարկաւոր է այդպէս վարվել, որովհետեւ այստեղ գաղտնի խօսում են, որ Աստրիայի և Անգլիայի մէջ համաձայնութիւն է կայացել Ռուսաստանի դէմ գործելու և Թիւրքիային օգնելու համար:

ԳԵՐՄԱՆԻԱ

Ստրասբուրգում նոյեմբերի 11-ին բացվեցաւ Basse-Alsace-ի ընդհանուր ժողովը: Պ. Պիկ, գրաւելով նախագահական թիկնաթոռը, ասաց հետևեալ խօսքերը:

«Մեր վերջին գարնան նիստերից փոքր ինչ յետոյ՝ աղետալի անցքեր են պատահել աշխարհում: Երկու եղանակներով մէկ մեկու ետեւից խորը կերպով յուղեցին ժողովորդի միտքը:

«Մենք ևս, պարոններ, մեր հայրենիքի ուրիշ ժողովների նման, ամենայն ուրախութեամբ ժողովները կազմելու այն արտայայտութիւնը, որ առաջանում է ամեն կողմից, որով աշխատենք օրօրի դատաւարներ

այս ցած օճաղորդործութիւնները, նոյնպէս շնորհաւորել նորին մեծութիւնը, որ այսպէս բազմաւոր կերպով սպառնաց մի այսպիսի ահաւոր վտանգից»:

Կեօնից գրում են որ Վիւրտեմբերգի թաւաւորը գնացել է Վիւրտեմբերգ, կայսրին ողջունելու:

ՆԱՄՍԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Բերլին. 19/11. 78.

Մի քանի օր առաջ վերադառնալով Գերմանիայի մայրաքաղաքը ես ինձ դժբաղդ էի համարում, որ միութարական ոչինչ նիւթ չէի գտնում ձեզ հաղորդելու, բայց այն այս րօպէիս ստանում եմ Կ. Պօլսից մի նոր տպած տետրակ «Թէ ինչ շահեցանք Պերլինի վեհաժողովին» վերնագրով: Այդ հետաքրքիր տետրակի հեղինակն է հայոց հասարակութեան արդէն յայտնի մի գրող, Բերլինի կօնգրէսի Թիւրքիայի հայոց լրագրողների քարտուղար, յարգելի պ. Միւնստ Զերադ:

Ինչպէս ձեզ յայտնի է Հայաստանի և մանաւանդ Կ. Պօլսի հայերը, տեղեկանալով որ նրանց ուղարկած պատգամաւորներին չափողեցաւ իրաւործել իրանց նպատակները, այսինքն կօնգրէսից ընդունել տալ Հայաստանի համար նախագծած վարչական ինքնավարութիւնը (ինքնօրինութիւն—ինչպէս ասում է պ. Մ. Զ.), սկսեցին իրանց դժգոհութիւնը արտայայտել գործերին տուած ընթացքին, բողբոլել պատգամաւորների դէմ, նախատել նրանց, որ նրանք իրանց պարզը չը կատարեցին, չարաբարացին նրանց վրա ազգի կողմից դրած յայտերը: Եւ գուցէ իրանք պատգամաւորներն էլ գոհ չեղան այն արգելափակումից, որ պիտի իրանց հետ տանէին հայրենիք—բայց այդ դժգոհութիւնը կարող էր միայն րօպէական լինել, միայն այն ժամանակ, երբ պատգամաւորներն անքուն գիշերներ անցնելուց յետոյ, իրանց բոլոր մտաւոր ոյժերը լաւած, ամեն կողմից քաջալերված, թէ եւրօպական լրագրողները, թէ մամուլի կողմից, որ հայերի պահանջները իրաւացի և համեստ անուանեց ի յայտնելու էին: Բայց յետոյ, երբ ստանահողութեամբ նայեցին պէտք է իրանք իրանց ասէին, որ արդիւնքը, որին նրանք հասան այնու ամենայն փոքր չէր, որ նրանց շնորհով հայոց և Հայաստանի անունները մի քանի դարերից յետոյ, որ անց էին կացել առանց քաղաքական կեանքի, կրկին առաջին անգամ երեւցան մի եւրօպական դաշնագրի մէջ, որ ստորագրվեցաւ եօթ մեծ պետութիւնների ներկայացուցիչներից:

Պ. Մ. Զերադ յիշված գրքի մէջ ցոյց է տալիս, որքան անարդար է հայերի դժգոհութիւնը Բերլինի կօնգրէսի արգելափակումի մասին, նա մի առ մի թուում է ինչպէս չափեցան հայերը թէ Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածից, թէ մասնաւոր այն դաշնագրից որ կայացաւ Թիւրքիայի և Անգլիայի մէջ, ցոյց է տալիս թէ ինչպէս այժմ հայերիցն է կախված այն արտօնութիւններից, որք նրանց տրվեցան օգուտ քաղել, աշխատելով անգործ չը մնալ իրանց վիճակի փոփոխութիւնների մէջ, այլ ջանալ անընդհատ դաշնագիր ստորագրող պետութիւնների ուղարկութիւն գրաւել Հայաստանի գործերի վրա, եթէ այս կամ այն խոստում չը պիտի կատարվի կամ իրաւործվի: Հեղինակը ցոյց է տալիս որ հայերը մենակ չէին, որք դժգոհ մնացին Բերլինի կօնգրէսի վիճակներից, այլ որ ոչ մի մասնակցող կողմ գոհ չեղաւ:

Ռուս կառավարութիւնը, ասում է նա մի տեղ, որի յաղթական բանակներն հասան մինչեւ Կ. Պօլս, խաղաղութիւն չնորհելով Սուլտանին, ստիպվեցաւ Եւրօպայի վճռով հրաժարվել Բայազէտից: «Երբ Ռուս մի այսպիսի ընդունելութիւն կը գտնէր, Հայն կրնար ակնկալել, որ պատկուէին իւր բոլոր իղձերը»—«Հայաստան, չարուհիութեամբ է հեղինակը, իրաւունք ունէր ստանալ վարչական ինքնօրինութիւն, որ Եւրօպա զլացաւ: Կրէտէի, կամ ընդունալ էինք մի ինքնօրէն կեանքի, մենք որ գիտակցեցինք մեր ինքնակի դժբանդիւնը են, որովք չեմ ուզեր զբաղել: Այլ կը փութամ յաւելել, թէ Եւրօպայ, վարչական ինքնօրինութիւն զլանալով մեզ, չնորհեց սակայն մի յօդուած, որ կրնայ աստիճանապէս տանել զմեզ ուր կը ցանկայինք հասնել» Եւ բերելով յօդ. 61-ը թարգմանութիւնը աւելացնում է՝ «այն մի պարբերութիւն, որ կրնայ աւետել ապագային համար մի վարչական ինքնօրինութիւն»:

Հեղինակը վստահութեամբ նայում է Թիւրքիայի Հայաստանի ապագայի վրա և աւետում է նրան աջողութիւն, եթէ իրանք հայեր անգործ չը մնան իրանց օգուտների պաշտպանութեան մէջ: Նա հիմնում է իր յոյսերը եւրօպական միջամտութեան վրա և նրա մէջ է տեսնում ամենահաստատ գրաւական:

Ցոյց տալով թէ ինչպիսի համակրութեամբ վերաբերվեցան լրագրողները Հայաստանի խնդրին, պ. Զերադ յիշում է գրաֆ Դուվալի խօսքերը, որ նա արտասանեց կօնգրէսի տասնութ երրորդ նիստի մէջ: «Մարթէ պնդել թէ միջամտութիւն չը կայ բնաւ ճաճկաստանի մէջ, երբ բազմաթիւ եւրօպական մասնախումբեր կան Բուլղարիայի մէջ, յոյն նահանգներին մէջ, Հայաստանի մէջ...» Մի այլ տեղ յիշում է նաև կօնգրէսի նոյն յարգելի անդամի խօսքերը, որով նա պահանջեց «մի եւրօպական մասնախումբ Հայաստանի համար ալ»:

Պ. Միւնստ Զերադը տետրակը կարգաւոր արժանի է, որովհետեւ նրա հեղինակը մտածող մարդ է և բացի սրանից աւելի մօտ, քան թէ մի այլ ոք, ծանօթ է Հայոց խնդրի հետ, վասն զի նա ակնհայտեան էր և ինքն անխնայ գործող հայոց պատգամաւորութեան գործերի մէջ:

Յիշեց վերջը միայն այն, որ տետրակի հեղինակը կարծիքով զիստուր ծառայութիւնը մատուցած է Հայոց խնդրին ներսէս պատրիարքը, որին և նուիրում է նա իր գրութեանը, և համեմատութիւն անելով մի պատմական անցքի հետ, պահանջում է որ Թիւրքիայի հայերը նոյնքան շնորհակալ լինեն Ներսէս պատրիարքին, որքան շնորհակալ եղաւ հին Հռօմի ծերակոյտը և ժողովուրդը Տիրէնտին Վարդանի հռօմէական առաջնորդին, երբ նա, յաղթված Անիի թաղից, վերադարձաւ Հռօմ «զի հաւատ ունեցած էր հայրենիքի վրա»:

Եւ կարող կը լինէի շարունակել խօսքս այս տետրակի մասին, նրանից քաղուածներ անելով, բայց գուցէ այն ժամանակ պիտի ամբողջութեամբ արտագրէի նրան: Աւելի լաւ չէ ընթերցողը ինքն ձեռք առնի և կարդայ նրան: Իմ նպատակս էր միայն նրա վրա ուղարկութիւնը դարձնել:

Ա. Արծրունի

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԲԵՐԼԻՆ, 17/29 նոյեմբերի. Երեկոյան լրագրողները հաղորդում են—Այսօր ոստիկանութեան նախագահը ազգարարութիւն ուղարկեց ռուսաց-սօցիալական կուսակցութեան մօտ 40 նշանակութիւն ունեցող անձինքներին հեռանալ մայրաքաղաքից: Այսպիսի ազգարարութեան ստացողների թուում գտնվում են Հասնէյման և Ֆրիցշէ պատգամաւորները:

ԲԵՐԼԻՆ, 19/29 նոյեմբերի. Կալ շարաթ սպանում են այստեղ Գօրչակովին, որ առանց երկար մնալու, Պետերբուրգ կը գնայ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 նոյեմբերի. «Правит. Вѣстникъ» լրագրին հաղորդում են հետևեալը: Լիվադիա, 17/29 նոյեմբերի. Կայսրը դուրս եկաւ Լիվադիայից, Սիմֆերօպօլի նա կը գնայ Մօսկվա: «Русск. Инвалидъ» լրագրին հաղորդում են. Կայսրը կը հասնի Պետերբուրգ նոյեմբերի 22-ին: «Повое Времѣ» լրագրին գրում են հետևեալը. Լօնդօն, 17/29 նոյեմբերի. Անգլիան թոյլ չէ տալիս ռուսաց զորքերին գրաւելու Մերվա: «Голосъ» լրագրին գրում են հետևեալը. Լօնդօն, 17/29 նոյեմբերի. Այստեղ սպանում են, որ մինչև պարլամենտի բացուելը, Անգլիացոց զորքերը կը յաջողացնեն գրաւել Աֆգանիստանի այն մասերը, որոնց տերութիւնը ցանկանում է պահել իրեն պատերազմական կէտեր:

ԼՕՆԴՈՆ, 18/30 նոյեմբերի. Երեկ մայր Պիրսօնի բանակը ենթարկվեցաւ Աֆրիկեան ցեղի յարձակմանը Հայբերեան անցքի մօտ. սպանուեցան երկու զինուորներ և մայր Պիրսօնի ձին: Երեկ անցքը փակված է, պաշարակիր սպայերը վերադարձան: Իններորդ

գնդի մի մասը և 45-րորդ Սօնիական գունդը առաջ դնացին դէպի պատերազմի տեղը: Հրացանաձգութեան ձայներ են լսվում Հետևանքը յայտնի չէ: Երեկուանից Ալեմսօջի մօտ սաստիկ հրացանաձգութեան ձայներ են լսվում: Աֆրիկական ցեղը թշնամաբար է վարվում Անգլիացոց հետ:

ԼՕՆԴՈՆ 19 նոյեմբերի (1 դեկտեմբերի) Կալստօն մի ծառ կարգաց, որի մէջ նա յանդիմանում է միսիստրներին նրա համար, որ նրանք պարլամենտին ոչ մի տեղեկութիւն չը ներկայացրին ոչ Աֆգանիստանի և ոչ էլ Կալստօնի դեսպանութեան հարցի մասին և սկսեցին յարձակվել Աֆգանիստանի վրա առանց պարլամենտին հրաւիրելու: Նա վերջացրեց իր ծառը ասելով. Աֆգանիստանի դէմ պատերազմը անարգար է և կարող է Հնդկաստանի կայսրութեան ընկնելուն պատճառ լինել:

ՄԱԴՐԻԴ, 18/30 նոյեմբերի: Միսիստրների ժողովը վճռեց այսօր միջազգային ընկերութեան անդամներին արտաքսել:

ՀՈՍՏ, 20 նոյեմբերի (2 դեկտեմբերի): Իշխանութեան կարգադրութեամբ Բարիանայի բոլոր կուրքերը, թուով երեսուն փակված են:

ԼԱՏՎԻԱ 28 նոյեմբերի (2 դեկտեմբերի): Աֆրիկեան ցեղի մի մասը հնազանդվեցաւ. միացող մասը ցրված է: Շաղիբազի բարձրութիւնների ամրոցները քանդված են: Հայբերեան անցքը ապահովված է տարածութեամբ մինչև Դակար:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 նոյեմբերի: Պետական բանկի 50% տոմսերը առաջին շրջանի տրոժէ 97 ր. երկրորդը 95 ր. 24 Կ. չորրորդ 91 ր. 12 Կ. ներքին 50% առաջին փոխառութեան տոմսերը տրոժէ 234 ր. 50 Կ. երկրորդ 225 ր. 75 Կ. ուրի 8 ր. 39 Կ.: Ռուսաց 1 ռուբլ. Լօնդօնի վրա տրոժէ 23, 43 պենս: Տրամադրութիւնը ամուր է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 նոյեմբերի. «Правит. Вѣстникъ» լրագրին Մօսկվայից հեռագրում են: Քաղաւոր Կայսրը հասաւ Մօսկվա նոյեմբերի 19-ին, երեկոյան 10 ժամին: Նորին Մեծութիւնը իջաւ Կրեմլի վրէժի մեծ պալատում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 նոյեմբերի. Նեվայի վրա սառուց է լողում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 նոյեմբերի. «Правит. Вѣстникъ» լրագրը տպել է Քաղաւոր Կայսրի Կրեմլի վրէժի պալատում ստան հետևեալ խօսքերը: «Մե շատ ուրախ եմ, որ կարող եմ ինքս կրկնել Մօսկվայի բոլոր գաղապարներին իմ շնորհակալութիւնը անցեալ պատերազմի ժամանակ ցոյց տուած բարի գործունեութեան համար: Ձեր ազնիւ օրինակին հետեւեց ամբողջ Ռուսաստանը: Յոյս ունեմ, որ շատ կարճ ժամանակամիջոցում վերջնական խաղաղական դաշնագիրը Թիւրքիայի հետ ստորագրված կը լինի: Շնորհակալ եմ նոյնպէս Ս. Պետերբուրգում և Ռուսաստանի այլ տեղերում պատահած ցաւալի անցքերի պատճառով ձեր արտայայտած հաւատարմութեան զգացմունքների համար: Բոլորովին հաւատում եմ այդ զգացմունքների անկեղծութեանը և չեմ կասկածում, որ երբ ես չեմ լինի, այդ զգացմունքները կունենաք դէպի իմ օրդին և նրա ժառանգը: Ես յոյս ունեմ, որ դուք կօքնէք Ինձ յետ դարձնել երիտասարդութիւնը այն վտանգաւոր ծանապարհից, որի վրա նրան մղում են անբարեյոյս մարդիկ: Թող օգնէ մեզ Աստուած և շնորհէ մեզ միութարութիւն տեսնել մեր թանգազին հայրենիքի խաղաղ և օրինաւոր ծանապարհով զարգանալը: Միայն այդ ծանապարհով կարելի է ապահովել Ռուսաստանի ապագայ հզօրութիւնը, որ ձեզ համար նոյնքան թանգազին է, որքան Ինձ համար»:

